**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 10**
**ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտական խորհրդի**
**2025թ. հունիսի 2-ի նիստի**

Խորհրդի 32 անդամներից նիստին ներկա էին 25-ը: Նիստը նախագահում էր խորհրդի նախագահ դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար տ.գ.թ., դոցենտ Հ.Մարգարյանը:

Քվորումը ստուգելուց առաջ, խորհրդի նախագահը նշեց, որ գիտխորհրդի կազմում կատարվել է փոփոխություն: ԳԽ կազմից սովորողի կարգավիճակի դադարեցման հիմքով դուրս է եկել Տիգրան Արամի Կարապետյանը և ֆակուլտետի Ուսանողական խորհուրդը նրա փոխարեն ֆակուլտետի ԳԽ սովորող անդամ է ընտրել «Կառավարում» կրթական ծրագրի 2-րդ կուրսի բակալավրիատի ուսանողուհի Լիանա Էդգարի Այվազյանին: Խորհրդի անդամները շնորհավորեցին գիտխորհրդի նորընտիր անդամին և մաղթեցին արգասաբեր աշխատանք:

Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը քվեարկության դրեց օրակարգը, որը միաձայն հաստատելուց հետո խորհուրդն անցավ օրակարգային հարցերի քննարկմանը (օրակարգը կցվում է):

**ՕՐԱԿԱՐԳ**

1. Առկա ուսուցմամբ ասպիրանտների ատեստավորում
2. Բակալավրի և մագիստրոսական կրթական ծրագրերի ղեկավարների 2024-2025 ուստարվա հաշվետվություն
3. Ընթացիկ հարցեր

**1. Առկա ուսուցմամբ ասպիրանտների ատեստավորում**

**1.1 ԼՍԵՑԻՆ.** ԵՊՀ Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտի ատեստավորման մասին հարցը:

**1.1 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.**

**1.** Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի 1-ին տարվա առկա ուսուցմամբ ասպիրանտ Սուսաննա Լևոնի Համբարձումյանի

ատեստավորման միջնորդությունը ներկայացրեց ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Գ.Հայրապետյանը:

Տ.գ.թ., դոցենտ Գ.Հայրապետյանը հայտնեց, որ Սուսաննա Լևոնի Համբարձումյանի «Հայաստանի Հանրապետության արտաքին առևտրի դիվերսիֆիկացման հիմնախնդիրները» թեմայով (ղեկավար տ.գ.դ., պրոֆեսոր Թ.Թորոսյան) ատենախոսության շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել է մասնագիտական գրականություն և կազմվել է ատենախոսության պլանը: Մասնակցել է ասպիրանտների համար նախատեսված պարտադիր՝ «Տեղեկատվական և կրթական տեխնոլոգիաներ (4 կրեդիտ)», «Գիտական հետազոտությունների մեթոդաբանություն (4 կրեդիտ)», «Անգլերեն լեզու (4 կրեդիտ)» և ընտրովի՝ «Գիտության փիլիսոփայություն (6 կրեդիտ)», «Մասնագիտական հաղորդակցման հոգեբանություն (3 կրեդիտ)», «Մարդկային և նյութական ռեսուրսների կառավարում (3 կրեդիտ)», «Գիտաչափություն և գիտական շտեմարաններ (3 կրեդիտ)» դասընթացներին: Նաև ներկայացրել է տեղեկանք աշխատանքի վայրից՝ պրակտիկա (10 կրեդիտ) և նախապատրաստել է 1 հոդված հրատարակման համար:

**2.** Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը մատնանշեց, որ Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտը հաշվետու տարվա պլանով նախատեսված աշխատանքները կատարել է պահանջվող որակով և ծավալով, ինչը բավարար է ատեստավորման համար և առաջարկեց Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Գ.Հայրապետյանի միջնորդությունը այս հարցի կապակցությամբ դնել քվեարկության:

**1.1 ՈՐՈՇԵՑԻՆ.**

Հիմք ընդունելով Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի 06.05.2025թ. թիվ 7 նիստի որոշումը, հաշվի առնելով հաշվետու ժամանակահատվածում ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտ Սուսաննա Լևոնի Համբարձումյանի կատարած աշխատանքը և խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ Սուսաննա Լևոնի Համբարձումյանի (1-ին տարի) կատարած աշխատանքը համարել բավարար և ատեստավորել:

Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի առկա ասպիրանտն ատեստավորվեց՝ միաձայն քվեարկությամբ (25 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ):

**1.2 ԼՍԵՑԻՆ.** ԵՊՀ Կառավարման և գործարարության ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտների ատեստավորման մասին հարցը:

1.2 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

1. Կառավարման և գործարարության ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտների ատեստավորման միջնորդությունը ներկայացրեց ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանը՝ նշելով, որ ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտները երեքն են՝ Մկրտչյան Մարիանա Հայկազի (3-րդ տարի), Սարգսյան Սիլվիա Սարգսի (1-ին տարի), Գևորգյան Ալիսա Արենի (1-ին տարի):

Տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանը հայտնեց, որ Մարիանա Հայկազի Մկրտչյանի «Բիզնես գործընթացների կառավարման արդյունավետության բարձրացման հիմնախնդիրները ՀՀ ցանցային կազմակերպություններում» թեմայով (ղեկավար տ.գ.դ., պրոֆեսոր Վ.Աբրահամյան) ատենախոսության շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում կատարված աշխատանքի վերաբերյալ ամբիոնը հաշվետվություն չի ստացել, ասպիրանտը ամբիոնի նիստին չի ներկայացել:

Տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանը հայտնեց, որ Սիլվիա Սարգսի Սարգսյանի «Մարդկային կապիտալի զարգացման հիմնախնդիրները ՀՀ աշխատաշուկայի վերափոխման պայմաններում» թեմայով (ղեկավար տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյան) ատենախոսության շրջանակներում ուսումնասիրվել է մասնագիտական գրականություն և մի շարք առաջատար և զարգացող երկրների փորձը՝ մարդկային կապիտալի զարգացման հետազոտման էվոլյուցիոն ընթացքը, ինչի հիման վրա կազմվել է ատենախոսության 1-ին գլխի նախնական տարբերակը: Իրականացվել է էկոնոմետրիկ վերլուծություն՝ նպատակ ունենալով գնահատել տնտեսական զարգացման և մարդկային կապիտալի զարգացման փոխազդեցությունը: Մասնակցել է ասպիրանտների համար նախատեսված դասընթացներին և կուտակել է ողջ ուսումնառության ընթացքում անհրաժեշտ կրեդիտների քանակը: 1 հոդված գտնվում է ավարտման փուլում, որը նախատեսվում է ներկայացնել հրատարակման միջազգային մասնագիտական հանդեսում:

Տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանը հայտնեց, որ Ալիսա Արենի Գևորգյանի «Տնտեսական հարաբերությունների զարգացման հիմնախնդիրները ՀՀ-ում թվային փոխակերպումների պայմաններում» թեմայով (ղեկավար տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյան) ատենախոսության շրջանակներում ուսումնասիրվել է մասնագիտական գրականություն և մի շարք առաջատար և զարգացող երկրների փորձը՝ թվայնացման ռազմավարությունների իրագործման և տնտեսական համակարգերի թվային վերափոխման ոլորտում՝ ինչի հիման վրա կազմվել է ատենախոսության 1-ին գլխի նախնական տարբերակը: Իրականացվել է էկոնոմետրիկ վերլուծություն՝ նպատակ ունենալով գնահատել տնտեսական զարգացման և թվայնացման գործընթացների փոխազդեցությունը: Մասնակցել է ասպիրանտների համար նախատեսված

դասընթացներին և կուտակել է ողջ ուսումնառության ընթացքում անհրաժեշտ կրեդիտների քանակը: 1 հոդված գտնվում է ավարտման փուլում, որը նախատեսվում է ներկայացնել հրատարակման միջազգային մասնագիտական հանդեսում:

**2.** Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը մատնանշեց, որ Կառավարման և գործարարության ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտները՝ բացառությամբ Մարիանա Հայկազի Մկրտչյանի, հաշվետու տարվա պլանով նախատեսված աշխատանքները կատարել են պահանջվող որակով և ծավալով, ինչը բավարար է ատեստավորման համար և առաջարկեց Կառավարման և գործարարության ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանի միջնորդությունը այս հարցի կապակցությամբ դնել քվեարկության:

**1.2 ՈՐՈՇԵՑԻՆ.**

Հիմք ընդունելով Կառավարման և գործարարության ամբիոնի 23.05.2025թ. թիվ 8 նիստի որոշումը, հաշվի առնելով հաշվետու ժամանակահատվածում ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտների՝ բացառությամբ Մարիանա Հայկազի Մկրտչյանի, կատարած աշխատանքը և խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ Սիլվիա Սարգսի Սարգսյանի (1-ին տարի), Ալիսա Արենի Գևորգյանի (1-ին տարի) կատարած աշխատանքները համարել բավարար և ատեստավորել:

Հիմք ընդունելով «Կառավարման և գործարարության» ամբիոնի 23.05.25թ. թիվ 8 նիստի որոշումը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ ասպիրանտ Մարիանա Մկրտչյանը չի ներկայացել նիստին՝ 3-րդ տարվա ասպիրանտ Մարիանա Հայկազի Մկրտչյանի մեկ տարվա կատարած աշխատանքը համարել անբավարար և չատեստավորել:

Կառավարման և գործարարության ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտները՝ բացառությամբ Մարիանա Հայկազի Մկրտչյանի, ատեստավորվեցին՝ միաձայն քվեարկությամբ (25 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ):

**1.3 ԼՍԵՑԻՆ.** ԵՊՀ Ֆինանսահաշվային ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտի ատեստավորման մասին հարցը:

**1.3 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.**

**1.** Ֆինանսահաշվային ամբիոնի 3-րդ տարվա առկա ուսուցմամբ ասպիրանտ Մարիամ Սամվելի Գրիգորյանի ատեստավորման միջնորդությունը ներկայացրեց ամբիոնի վարիչի պաշտոնակատար, տ.գ.թ., ասիստենտ Գ.Սահակյանը:

Տ.գ.թ., ասիստենտ Գ.Սահակյանը հայտնեց, որ Մարիամ Սամվելի Գրիգորյանի «Ֆինանսական հաշվետվությունների աուդիտում վերլուծական ընթացակարգերի

մեթոդական ապահովման հիմնախնդիրները» թեմայով (ղեկավար տ.գ.դ., պրոֆեսոր Վ.Բոստանջյան) ատենախոսության 1-ին և 2-րդ գլուխները գրեթե ամբողջապես պատրաստ են: Ուսումնառության ընթացքում վաստակած կրեդիտների քանակը 2025թ. մայիս ամսվա դրությամբ կազմում է 26 կրեդիտ: Հաշվետու ժամանակահատվածում մասնակցել է «Անձնային աճ և ինքնակարգավորում (3 կրեդիտ)», «Համալսարանական դասավանդման դիդակտիկա (3 կրեդիտ)», «Գիտաչափություն և գիտական շտեմարաններ (3 կրեդիտ)» դասընթացներին, տպագրել է թեմային առնչվող 3 գիտական հոդված և դարձել է Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության Որակավորված երդվյալ հաշվապահների ասոցիացիայի (ACCA) անդամ՝ սկսած 2024 թ.-ի հոկտեմբերից: Պատրաստվում է աշնանային կիսամյակում (սեպտեմբերին) վերցնել մեկ 5 կրեդիտանոց դասընթաց և 1 կրեդիտանոց սեմինար ժամեր, նաև մինչև գարնանային կիսամյակի ավարտը գրանցվել և հանձնել մասնագիտական մինիմումների երկու քննությունները:

**2.** Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը մատնանշեց, որ Ֆինանսահաշվային ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտը հաշվետու տարվա պլանով նախատեսված աշխատանքները կատարել է պահանջվող որակով և ծավալով, ինչը բավարար է ատեստավորման համար և առաջարկեց Ֆինանսահաշվային ամբիոնի վարիչի պաշտոնակատար, տ.գ.թ., ասիստենտ Գ.Սահակյանի միջնորդությունը այս հարցի կապակցությամբ դնել քվեարկության:

**1.3 ՈՐՈՇԵՑԻՆ.**

Հիմք ընդունելով Ֆինանսահաշվային ամբիոնի 08.05.2025թ. թիվ 9 նիստի որոշումը, հաշվի առնելով հաշվետու ժամանակահատվածում ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտի կատարած աշխատանքը և խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ Մարիամ Սամվելի Գրիգորյանի (3-րդ տարի) կատարած աշխատանքը համարել բավարար և ատեստավորել:

Ֆինանսահաշվային ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտը ատեստավորվեց՝ միաձայն քվեարկությամբ (25 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ):

**1.4 ԼՍԵՑԻՆ.** ԵՊՀ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտների ատեստավորման մասին հարցը:

**1.4 ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.**

**1.** Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտների ատեստավորման միջնորդությունը ներկայացրեց ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Խառատյանը՝ նշելով, որ ամբիոնի առկա ուսուցմամբ

ասպիրանտները երկուսն են՝ Թիրաբյան Տիգրանուհի Վարուժանի (2-րդ տարի), Բաբայան Արման Մանվելի (1-ին տարի):

Տ.գ.թ., դոցենտ Ա.Խառատյանը հայտնեց, որ Տիգրանուհի Վարուժանի Թիրաբյանի «Ֆինանսական ռիսկերի կառավարումը ժամանակային շարքերի և մեքենայական ուսուցման մեթոդների կիրառմամբ» թեմայով (ղեկավար տ.գ.դ., պրոֆեսոր Ռ.Գևորգյան) ատենախոսության շրջանակներում կատարվել է մասնագիտական գրականության ուսումնասիրում, հավաքագրվել են նյութեր և իրականացվել են վերլուծական աշխատանքներ ֆինանսական ռիսկերի կառավարման մեթոդների, ինչպես նաև մարդ-համակարգիչ փոխազդեցության կիրառման վերաբերյալ: Աշխատանքներ են ընթանում 2 նոր գիտական հոդվածների վրա՝ հիմնված օգտատերերի վարքագծի, ինտերֆեյսների օգտակարության համեմատական վերլուծության և տեսողական ուշադրության մոդելների կիրառման վրա: Ասպիրանտը հանձնել է ընդհանուր պատրաստվածության պարտադիր դասընթացները, ներառյալ «Անգլերեն լեզու (4 կրեդիտ)», «Գիտական հետազոտությունների մեթոդաբանություն (4 կրեդիտ)» և «Գիտության փիլիսոփայություն (6 կրեդիտ)» դասընթացների ստուգարքները:

Տ.գ.թ., դոցենտ Ա.Խառատյանը հայտնեց, որ Արման Մանվելի Բաբայանի «Մուլտիմոդալ մոդելների կիրառությունը դասընթացների արդյունավետության գնահատման խնդիրներում» թեմայով (ղեկավար տ.գ.դ., պրոֆեսոր Ռ.Գևորգյան) ատենախոսության շրջանակներում կատարվել է մասնագիտական գրականության ուսումնասիրում և իրականացվել է ատենախոսության համար անհրաժեշտ տվյալների հավաքագրում: Մասնակցել է ասպիրանտների համար նախատեսված պարտադիր և կամընտրական դասընթացներին, կուտակել է պարտադիր դասընթացներից 12, կամընտրականներից՝ 9 կրեդիտ: Տպագրվել է մեկ հոդված, ևս մեկն ուղարկվել է Scopus գիտական շտեմարան տպագրության:

**2.** Դեկան, տ.գ.թ., դոցենտ Կ.Խաչատրյանը մատնանշեց, որ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտները հաշվետու տարվա պլանով նախատեսված աշխատանքները կատարել են պահանջվող որակով և ծավալով, ինչը բավարար է ատեստավորման համար և առաջարկեց Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Ա.Խառատյանի միջնորդությունը այս հարցի կապակցությամբ դնել քվեարկության:

**1.4 ՈՐՈՇԵՑԻՆ.**

Հիմք ընդունելով Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի 29.05.2025թ. թիվ 11 նիստի որոշումը, հաշվի առնելով հաշվետու ժամանակահատվածում ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտների կատարած

աշխատանքը և խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ Տիգրանուհի Վարուժանի Թիրաբյանի (2-րդ տարի), Արման Մանվելի Բաբայանի (1-ին տարի) կատարած աշխատանքները համարել բավարար և ատեստավորել:

Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտները ատեստավորվեցին՝ միաձայն քվեարկությամբ (25 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ):

**2. ԼՍԵՑԻՆ.** ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի բակալավրի և մագիստրոսական կրթական ծրագրերի ղեկավարների 2024-2025 ուստարվա հաշվետվության հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.**

**1.** Դեկան, դոցենտ Կ.Խաչատրյանը հանդես եկավ առաջարկով՝ բակալավրի 3 («Տնտեսագիտություն», «Կառավարում», «Ֆինանսներ») և մագիստրոսական 4 («Գործարար վարչարարություն (կառավարում)», «Շուկայագիտություն (մարքեթինգ)», «Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ», «Տվյալների գիտությունը բիզնեսում») կրթական ծրագրերի ղեկավարների 2024-25 ուստարվա հաշվետվության ներկայացման համար սահմանել 5 րոպե, հարցուպատասխանի համար՝ 1-2 րոպե և հաշվետվության ներկայացման համար ձայնը փոխանցեց «Տնտեսագիտություն» բակալավրի կրթական ծրագրի ղեկավար, Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Գրիգոր Հայրապետյանին:

**2**. Տ.գ.թ., դոցենտ Գ.Հայրապետյանը հաշվետվության սկզբում նշեց, որ հաշվետու տարում նախորդ տարվա համեմատ «Տնտեսագիտություն» կրթական ծրագրի և՛ առկա, և՛ հեռակա ուսուցման գծով աճ է արձանագրվել՝ հղում կատարելով դիմորդների թվի, անցողիկ միավորների համեմատական վերլուծությանը: Կրթական ծրագրում իրականացված փոփոխություններից շեշտադրեց սեմինարների փոխարինումը գործնական պարապմունքներով՝ մատնանշելով, որ փոփոխության հիմնական շարժառիթը «Ինքնուրույն աշխատանք» և «Ընթացիկ ստուգում» գնահատման բաղադրիչների արդյունավետ կազմակերպումն է: Նշեց, որ, կարևորելով մասնագիտական հայալեզու գրականության դերը, հաշվետու տարում Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի կողմից պատրաստվել է «Համաշխարհային տնտեսություն» դասընթացի ուսումնական ձեռնարկը, որը ներկայումս գտնվում է հրատարակման փուլում: Հավելեց նաև, որ աշխատանքներ են տարվում «Տնտեսագիտություն» ուսումնական ձեռնարկի պատրաստման և հրատարակման համար: Մատնանշեց կրթական ծրագրի արդյունավետության բարձրացման գործում հրավիրյալ դասախոսների կողմից տարբեր թեմաներով կարդացված դասախոսությունների դերը

Էրազմուս+ ծրագրի շրջանակներում (Justin Chircop-Մալթայի համալսարան, Roman Klimko-Բրատիսլավայի տնտեսագիտության համալսարան, Andreas Irmen-Լյուքսեմբուրգի համալսարան, Carlos Guillermo Benavides-Մալագայի համալսարան և Salvador Canto-Մալագայի համալսարան)։ Հաշվետվությունը եզրափակեց ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմի վերապատրաստման և կրթական ծրագրի վերաբերյալ իրազեկվածության բարձրացման ուղղությամբ կատարված աշխատանքների ամփոփ ներկայացմամբ, մատնանշեց նաև այն փաստը, որ հաշվետու տարում «Տնտեսագիտություն» մասնագիտությամբ բոլոր ուսանողները հաջողությամբ ավարտել են բակալավրի կրթական ծրագիրը։

Հարցեր չհնչեցին։ Ելույթներ չեղան։

**3.** Դեկան, դոցենտ Կ.Խաչատրյանը նշեց, որ «Կառավարում» բակալավրի կրթական ծրագրի ղեկավարն է ՏԿՖ դեկանի տեղակալ, Կառավարման և գործարարության ամբիոնի դոցենտ, տ.գ.թ. Նարինե Միրզոյանը և 2024-25 ուստարվա հաշվետվության ներկայացման համար ձայնը փոխանցեց տ.գ.թ., դոցենտ Նարինե Միրզոյանին։

**4.** Տ.գ.թ., դոցենտ Ն.Միրզոյանը ամփոփ ներկայացրեց հաշվետու տարում «Կառավարում» կրթական ծրագրի լավարկման ուղղությամբ կատարված աշխատանքները՝ մատնանշելով, որ յուրաքանչյուր դասընթացի համար ստեղծվել է աշխատանքային խումբ (կրթական ծրագրի ղեկավար, ամբիոնի վարիչ, դասընթացը վարող դասախոս/դասախոսներ), դասընթացի միջազգային լավագույն փորձի ուսումնասիրության և գործատուների ժամանակակից պահանջներին համահունչ, դասընթացների ծրագրերը՝ թեմաների, նպատակի, գրականության ցանկի փոփոխման հարթությունում, լավարկելու նպատակով։ Նշեց, որ աշխատանքային խմբերն իրականացրել են նաև գնահատման ժամանակակից մեթոդների ուսումնասիրություն, ինչի արդյունքում փորձ է արվել ունիֆիկացնել դասընթացների բաղադրիչների գնահատումը։ Հավելեց նաև, որ ակտիվ իրականացվում են «Կառավարում» կրթական ծրագրի միջազգային հավատարմագրման նախապատրաստական աշխատանքները։ Կրթական ծրագրի հրապարակայնության և մասնագիտական կողմնորոշման աշխատանքների համատեքստում անդրադարձավ հաշվետու տարում կազմակերպված վարպետաց դասերին, ամբիոնի ակտիվ մասնակցությանը ֆակուլտետում կազմակերպված ամառային դպրոցի աշխատանքներին, ինչպես նաև մի շարք դպրոցներ իրականացված այցերին։ Տ.գ.թ., դոցենտ Ն.Միրզոյանը հաշվետվությունն ավարտեց աշխատանքային խմբերին ուղղված շնորհակալական խոսքով։

**5.** Հարցեր հնչեցրեց ֆակուլտետի ՈւԽ նախագահ, «Կառավարում» կրթական ծրագրի 2-րդ կուրսի ուսանող Բ.Բալայանը։

Հարցադրումներն առնչվում էին «Կառավարում» կրթական ծրագրում ներառված «Ծառայությունների ոլորտի էկոնոմիկա», «Հաշվապահական հաշվառում», «Կառավարչական հաշվառում» դասընթացների կիսամյակային բաշխվածության փոփոխման, ինչպես նաև ծրագրում չներառված «Կայուն զարգացում» դասընթացի ներառման նպատակահարմարությանը:

**6.** Դոցենտ, տ.գ.թ. Ն.Միրզոյանը պատասխանելով հարցադրումներին նշեց, որ յուրաքանչյուր փոփոխություն՝ այդ թվում նաև սույն կրթական ծրագիրը, պետք է վալիդացման փուլ անցնի: Հավելեց, որ բարձրացված հարցադրումների լուծման ուղղությամբ աշխատանքներն արդեն ձեռնարկված են իր կողմից և, որ պարբերաբար իրականացվող մշտադիտարկման նպատակը միտված է նմանօրինակ հարցերի լուծմանը:

**7.** Դեկան, դոցենտ Կ.Խաչատրյանը նշեց, որ «Ֆինանսներ» բակալավրի կրթական ծրագրի ղեկավարն է Ֆինանսահաշվային ամբիոնի վարիչի պատշոնակատար, տ.գ.թ. Գնել Սահակյանը և 2024-25 ուստարվա հաշվետվության ներկայացման համար ձայնը փոխանցեց տ.գ.թ, ասիստենտ Գ.Սահակյանին:

**8.** Տ.գ.թ, ասիստենտ Գ.Սահակյանը նախ ներկայացրեց ընթացիկ վիճակը՝ հղում կատարելով հաշվետու տարում Ֆինանսահաշվային ամբիոնում առկա և հեռակա ուսուցմամբ ուսանողների թվաքանակին՝ ըստ կուրսերի: Հավելեց, որ բակալավրի ընդունելության պահանջարկը գրեթե անփոփոխ է մնում վերջին մի քանի տարիներին, սակայն ընդունելության գնահատականի միջինը նվազման միտում ունի: Հաջորդիվ ամփոփ ներկայացրեց հաշվետու տարվա առկա ուսուցման ավարտական աշխատանքների գնահատականների համեմատական պատկերը նախորդ ուստարվա հետ: Մատնանշեց, որ ամբիոնը արդեն 2-րդ տարին անընդմեջ փոփոխության է ենթարկում «Ֆինանսներ» բակալավրի կրթական ծրագիրը: ԵՊՀ նոր պահանջներին համահունչ դարձնելու նպատակով մշակվել է 2024-2028 գրեթե ամբողջովին նոր կրթական ծրագիրը. ավելացվել են մի շարք նոր դասընթացներ, բոլոր 9 կրեդիտ պարունակող դասընթացները դարձել են 6 կրեդիտ: Ներկայացրեց այն խնդիրները, որոնք խոչընդոտում են նորմալ դասապրոցեսը՝ նվազեցնելով կրթական ծրագրի արդյունավետությունը. բաղադրիչների խնդիր (գործնական ժամերին ընթացիկ ստուգում անցկացնելն անարդյունավետ է), դասերի հաշվին հրավիրյալ դասախոսներին լսարանի տրամադրումը, գարնանային կիսամյակում ոչ աշխատանքային օրերից՝ ապրիլի 24-ը և մայիսի 1-ը, շաբաթվա նույն օրերն են՝ ստացվում է 15 մուտքից միայն 13 մուտք: Հաշվետվությունն ամփոփեց շեշտադրելով այն հանգամանքը, որ պետք է միջոցներ ձեռնարկվեն կրթության շարունակականության ապահովման՝ ամբիոնի մագիստրոսական կրթական ծրագրերի գրավչության բարձրացման և կայացման համար:

Հարցեր չհնչեցին: Ելույթներ չեղան:

**9.** Դեկան, դոցենտ Կ.Խաչատրյանը նշեց, որ «Գործարար վարչարարություն (կառավարում)» մագիստրոսական կրթական ծրագրի ղեկավարն է Կառավարման և գործարարության ամբիոնի դոցենտ, տեխ.գ.թ. Հարություն Զաքոյանը և 2024-25 ուստարվա հաշվետվության ներկայացման համար ձայնը փոխանցեց տեխ.գ.թ., դոցենտ Հ.Զաքոյանին:

**10.** Տեխ.գ.թ, դոցենտ Հ.Զաքոյանը նշեց, որ իր ներկայացրած հաշվետվության մեջ ընդգրկուն կերպով ներառված են կրթական ծրագրի քանակական բնութագրերը (ընդունելությունը և ուսանողական համակազմը, ուսումնական առաջադիմության ցուցանիշները, տվյալներ ծրագրի շրջանավարտների վերաբերյալ) վերջին 4 ուստարիների կտրվածքով, որոնք փաստում են, որ ծրագիրը միշտ կայանում է և՛ առկա, և՛ հեռակա ուսուցման գծով՝ շնորհիվ ամբիոնի աշխատակիցների համատեղ ջանքերի և թիմային աշխատանքի: Հավելեց, որ կրթական ծրագրում պարբերաբար կատարվող փոփոխությունները լավարկման նպատակ են հետապնդում և ներկայացրեց հաշվետու տարում կատարված փոփոխությունը՝ ուսումնական պլանում ներառվել է «Գործարար հաղորդակցություն» դասընթացը: Թվարկեց նաև 2025-26 ուստարվա համար նախատեսված փոփոխությունները՝ կամընտրական կառուցամասում դասընթացների ընդհանուր քանակը հասցվելու է 13-ի, ներառվելու են հետևյալ դասընթացները. «Կազմակերպությունների ներքին հսկողություն և աուդիտ»՝ «Կազմակերպությունների գործունեության կոնտրոլինգ» դասընթացի փոխարեն, «Գործարար հաղորդակցություն»՝ «Բանակցությունների վարում» դասընթացի փոխարեն, «Ռիսկ-մենեջմենթ», «Ռազմավարական կառավարում», մասնագիտական կառուցամասում նոր դասընթաց է ներառվելու՝ «Կազմակերպությունների արդյունավետության կառավարում»: Ամփոփելով հաշվետվությունը նշեց, որ կազմվել է «Գործարար վարչարարություն (կառավարում)» մագիստրոսական կրթական ծրագրի ուժեղ և թույլ կողմերի, արտաքին հնարավորությունների և վտանգների (SWOT) աղյուսակ՝ ինչը հիմք է հանդիսանալու ծրագրի բարելավմանն ուղղված հետագա գործողությունների պլանավորման համար:

Հարցեր չհնչեցին: Ելույթներ չեղան:

**11.** Դեկան, դոցենտ Կ.Խաչատրյանը նշեց, որ «Շուկայագիտություն (մարքեթինգ)» մագիստրոսական կրթական ծրագրի ղեկավարն է Կառավարման և գործարարության ամբիոնի վարիչ, տ.գ.թ., դոցենտ Աննա Հակոբջանյանը և 2024-25 ուստարվա հաշվետվության ներկայացման համար ձայնը փոխանցեց տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանին:

**12.** Տ.գ.թ., դոցենտ Ա.Հակոբջանյանը հաշվետվության սկզբում ներկայացրեց հաշվետու տարում ծրագրի կայացման մասով պատկերը. առկա ուսուցման գծով՝ 24

դիմորդ և 20 ընդունված, հեռակա ուսուցման գծով՝ 18 դիմորդ և 18 ընդունված, հավելեց, որ կրթական ծրագիրը միջազգային հավատարմագրման փուլում է: Ամփոփ ներկայացրեց հաշվետու տարում կրթական ծրագրի ուսումնական պլանում կատարված փոփոխությունները՝ մասնագիտական դասընթացների կազմում ներդրվել է «Կիրառական մենեջմենթ» դասընթացը (օտար լեզվով), «Սպառողական վարքի կառավարում» դասընթացի կիսամյակը և կրեդիտատարությունը փոփոխվել են (տեղափոխվել է 1-ին կիսամյակ, 3 կրեդիտ աշխատածավալով), «Բրենդի կառավարում» դասընթացը 1-ին կիսամյակից տեղափոխվել է 2-րդ կիսամյակ, «Մարքեթինգային վերլուծություններ և հետազոտության մեթոդներ» դասընթացը (օտար լեզվով) 1-ին կիսամյակից տեղափոխվել է 2-րդ կիսամյակ, նաև որոշակի փոփոխություններ են կատարվել 3-րդ կիսամյակի կամընտրական դասընթացների շարքում, այն տրամաբանությամբ, որ վերջին երկու տարվա ընթացքում չընտրված դասընթացները փոխարինվել են այլ դասընթացներով: Ընդգծեց այն փաստը, որ 2024-25 ուստարում «Շուկայագիտություն (մարքեթինգ)» և «Կառավարման հոգեբանություն» մագիստրոսական կրթական ծրագրերի համագործակցությամբ կատարվում է միջմասնագիտական մագիստրոսական թեզ, որն արժանացել է կրթական դրամաշնորհի՝ 750 000 դրամ գումարի չափով: Հակիրճ անդրադարձավ հաշվետու տարում ծրագրի շրջանակում կազմակերպված թվով 9 վարպետության դասերին, Zoom հարթակով 2 հրավիրյալ պրոֆեսորների (Քրիստո Կաֆտանջիև, Սոֆիայի համալսարանի պրոֆեսոր, Սարո Նաքաշյան, Պաղեստինի Բիրզեթ համալսարանի պրոֆեսոր, ԱՄՆ-ի Ֆերլեյթ Դիսկինսոնի համալսարանի հրավիրյալ պրոֆեսոր) կարդացած դասախոսություններին, ևս երեք կազմակերպություններում («Կերոն» զարգացման հիմնադրամ, «Մեդիա Սթրիմ» ՍՊԸ, «Գլոբալ Բյութի» ՍՊԸ) մասնագիտական պրակտիկա անցնելու հնարավորությանը՝ կարևորելով վերջիններիս դերակատարությունը կրթական ծրագրի արդյունավետության բարձրացման գործում:

Հարցեր չհնչեցին: Ելույթներ չեղան:

**13.** Դեկան, դոցենտ Կ.Խաչատրյանը նշեց, որ «Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ» մագիստրոսական կրթական ծրագրի ղեկավարն է Ֆինանսահաշվային ամբիոնի վարիչի պատշոնակատար, տ.գ.թ. Գնել Սահակյանը և 2024-25 ուստարվա հաշվետվության ներկայացման համար ձայնը փոխանցեց տ.գ.թ, ասիստենտ Գ.Սահակյանին:

**14.** Տ.գ.թ, ասիստենտ Գ.Սահակյանը նախ ներկայացրեց ընթացիկ վիճակը՝ հաշվետու տարում առկա ուսուցման «Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ» մագիստրոսական կրթական ծրագրով 1-ին կուրսում սովորում է թվով 11 ուսանող: Հեռակա ուսուցման նույն կրթական ծրագրով սովորող ուսանողներ ամբիոնը չունի՝ 2024-

25 ուստարում հեռակա ընդունելություն չի եղել՝ դիմորդների անբավարար քանակի պատճառով (3-4 դիմորդ)։ Ընդգծեց, որ հաշվի առնելով ընդունելության ձախողումը, կրթական շուկայի նոր մարտահրավերները, ամբիոնի կողմից մշակվել, քննարկվել է 1 տարի տևողությամբ «Ֆինանսներ» մագիստրոսական կրթական ծրագիրը, որը հավանության է արժանացել ֆակուլտետի գիտխորհրդի կողմից, ինչպես նաև հաստատվել է ԿԳՄՍ նախարարության կողմից (2024թ. հոկտեմբեր)։ Հաշվետվությունն ամփոփեց վերջին 2 ուստարում (2021-22, 2022-23) շրջանավարտների կողմից պարբերաբար բարձրացված խնդիրները (Excel-ի և Python-ի ուսուցման գծով անբավարար գործնական հմտությունները, կրկնվող դասընթացները և դրանց անհամապատասխանությունը աշխատաշուկայի պահանջներին) մատնանշելով և դրանց լուծման տարբերակներ առաջարկելով։

**15.** Ելույթ ունեցավ տ.գ.թ., դոցենտ Գ.Ղուկասյանը՝ նշելով, որ «Տեղեկատվական տեխնոլոգիաները տնտեսագիտությունում» դասընթացի շրջանակում, որն ի դեպ բակալավրի 3 կրթական ծրագրերում ներառված է ուսումնառության 1-ին կիսամյակում, տեղեկատվական տեխնոլոգիաների ավելի խորը ուսուցում հնարավոր չէ՝ մասնագիտական գիտելիքների անբավարարությամբ պայմանավորված, իսկ Python-ի ուսուցումը՝ գործիքների կիրառումը իրական աշխատանքային միջավայրում, արդեն 2024-25 ուսումնական տարվանից ներառված է բակալավրի 3 կրթական ծրագրերի առաջին կուրսերում։

**16.** Դեկան, դոցենտ Կ.Խաչատրյանը նշեց, որ «Տվյալների գիտությունը բիզնեսում» մագիստրոսական կրթական ծրագրի ղեկավարն է Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի պրոֆեսոր, տ.գ.դ. Ռուբեն Գևորգյանը և 2024-25 ուստարվա հաշվետվության ներկայացման համար ձայնը փոխանցեց տ.գ.դ., պրոֆեսոր Ռ.Գևորգյանին։

**17.** Տ.գ.դ., պրոֆեսոր Ռ.Գևորգյանը նշեց, որ «Տվյալների գիտությունը բիզնեսում» մագիստրոսական ծրագիրը շուրջ յոթ տարի համագործակցում է Սան Խոսեի պետական համալսարանի (ԱՄՆ) «Տվյալների անալիտիկա» մագիստրոսական ծրագրի հետ և ՏԳԲ ծրագրի թիմը յուրաքանչյուր տարի իրականացնում է համեմատական վերլուծություններ և քննարկումներ։ Հաշվետու տարում Սան Խոսեի պետական համալսարանում, ինչպես նաև արդի պայմաններում աշխատաշուկայում գրանցված որոշակի վերափոխումներով պայմանավորված ՏԳԲ գործող 2 տարի տևողությամբ կրթական ծրագրում կատարվել են փոփոխություններ։ Հավելեց, որ, ծրագրի գրավչության բարձրացման և առավել նեղ մասնագիտական հմտություններ փոխանցելու նպատակով, կրճատվել է ծրագրի տևողությունը (1,5 տարի) և մշակվել փոփոխված տարբերակը՝ հաշվի առնելով տվյալագիտության ոլորտում արձանագրված փոփոխությունները (Large Language Model (LLM) և գեներատիվ մոդելների արագ տարածումը), որոնք նոր մարտահրավերներ և

հնարավորություններ են ստեղծում բիզնեսի և տնտեսության համար: Հավելեց, որ 2025-26 ուստարում ՏԳԲ ծրագրի ուսպլանում ներառվել են 4 նոր դասընթացներ, սակայն ինչպես ՏԳԲ կրթական գործող ծրագրում, այնպես էլ փոփոխված տարբերակում երկու համալսարանների ուսումնական պլանները սինխրոնիզացված են, և ծրագրի լավագույն ուսանողները ուսումնառության 2-րդ տարում կրկին կարող են ուսումը շարունակել ԱՄՆ Սան Խոսեի պետական համալսարանում: ՏԳԲ ծրագրի արդյունավետության բարձրացման հարցում կարևորելով լավագույն ուսանողներին տրվող ֆինանսական աջակցությունը, կազմակերպվող գիտական սեմինարները, կրթական ծրագրում և գիտական դրամաշնորհներում ՏԳԲ դասախոսների և շրջանավարտների ներգրավվածությունը՝ հակիրճ անդրադարձավ հաշվետու տարում այդ ուղղություններով կատարված աշխատանքներին: Հաշվետվությունն ամփոփեց՝ մատնանշելով ՏԳԲ ծրագրի գործընկերների համագործակցության հնարավոր արդյունքները՝ ստաժավորում, ստարտափ խմբերի ձևավորում:

Հարցեր չհնչեցին: Ելույթներ չեղան:

**18.** Դեկան, դոցենտ Կ.Խաչատրյանը, օրակարգի 2-րդ հարցի քննարկումն ամփոփելով, նախ շնորհակալություն հայտնեց ֆակուլտետում գործող բակալավրի և մագիստրոսական կրթական ծրագրերի ղեկավարներին հաշվետու տարում կատարած աշխատանքների համար: Նշեց, որ ներկայացված հաշվետվությունները փաստում են արձանագրված էական տեղաշարժերի մասին և հավելեց, որ մտքերի փոխանակությունը, ուսանողների բարձրաձայնած հարցադրումները մեծապես նպաստում են ուսպլանների լավարկմանը՝ գործընթացին շարունակական բնույթ հաղորդելով: Կարևորեց ՈՒԽ դերը մշտադիտարկմանը ակտիվորեն մասնակցելու և հետադարձ կապի ապահովման համատեքստում: Մատնանշեց, որ Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնը պետք է կյանքի կոչի «Մաթեմատիկական տնտեսագիտություն և տվյալագիտություն» բակալավրի կրթական ծրագրի լիցենզավորումը: Ընդգծեց, որ, ի տարբերություն բակալավրի կրթական ծրագրերի, մագիստրոսական ծրագրերի կայացման խնդիրը դեռևս ակտուալ է, մասնավորապես՝ Տնտեսագիտության և միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնը չունի ոչ մի ծրագիր, չնայած «Միջազգային տնտեսական հարաբերություններ» մագիստրոսական կրթական ծրագիրը էապես փոփոխվել է և հայտագրվել, Ֆինանսների ամբիոնը ունի միայն 1 ծրագիր և պետք է ամեն ջանք գործադրի «Հաշվապահական հաշվառում և աուդիտ» մագիստրոսական ծրագրի վերաբացման համար: Տնտեսագիտության մեջ մաթեմատիկական մոդելավորման ամբիոնում գործում է միայն «Տվյալների գիտությունը բիզնեսում» ծրագիրը՝ այս ամբիոնը ևս պետք է մեծացնի մագիստրոսական ծրագրերի թիվը:

Դեկան, դոցենտ Կ.Խաչատրյանը շեշտադրեց հաշվետու տարում ԵՊՀ Որակի կենտրոնի հետ տարվող ինտենսիվ աշխատանքը՝ բակալավրի կրթական գործող ծրագրերի և մագիստրոսական 3 ծրագրերի հավատարմագրման համատեքստում, նշելով, որ ներկայում ուսումնասիրվում են ծրագրերի փաստաթղթերը, իսկ գործընթացն իր տրամաբանական ավարտին կհասնի ընթացիկ տարվա աշնանը: Հավելեց, որ ԵՊՀ բնագիտական թևից՝ Կենսաբանության, Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետները և Ֆարմացիայի ինստիտուտը անցել են միջազգային հավատարմագրման սույն գործընթացը, հումանիտար թևից այս պահին Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետից բացի գործընթացում ներգրավված է նաև Իրավագիտության ֆակուլտետը: Ամփոփելով հավելեց, որ ուսպլանների շարժընթացի գնահատման համար հաշվետվությունները պետք է ունիֆիկացված կառուցվածք ունենան, իսկ բովանդակային և հանգիստ քննարկման նպատակով հաջորդ ուստարի բակալավրի և մագիստրոսական կրթական ծրագրերի հաշվետվությունները կներկայացվեն գիտխորհրդի առանձին նիստերում: Ամփոփելով ելույթն առաջարկեց՝ քվեարկությամբ հաստատել 2024-2025 ուստարվա կրթական ծրագրերի ղեկավարների հաշվետվությունները՝ գնահատելով բավարար:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հիմք ընդունելով ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի բակալավրի և մագիստրոսական կրթական ծրագրերի ղեկավարների 2024-2025 ուստարվա ներկայացրած հաշվետվությունները և հաշվի առնելով խորհրդի նիստում արտահայտված կարծիքները՝ հաստատել 2024-2025 ուստարվա կրթական ծրագրերի ղեկավարների հաշվետվությունները՝ գնահատելով բավարար:

Հաշվետվությունները գնահատվեցին բավարար՝ քվեարկության 25 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ արդյունքներով:

*ԵՊՀ ՏԿՖ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Կ. ԽԱՉԱՏՐՅԱՆ*

*ԵՊՀ ՏԿՖ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ*